ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Աշխատանքի ծածկագիր 12632

ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան

21.07.2023թ.

Բարձրագույն դատական խորհրդի 13.07.2023 թվականի թիվ ԲԴԽ-71-Ո-221 որոշմամբ կազմավորված դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության աշխատանքների արդյունքների բողոքարկման հանձնաժողովը *(այսուհետ՝ Հանձնաժողով)*

կազմով՝
Բարձրագույն դատական խորհրդի անդամ **Երանուհի Թումանյանցի,**
Դատական դեպարտամենտի ներկայացուցիչ **Արսեն Հովհաննիսյանի,**
Արդարադատության նախարարության ներկայացուցիչ **Տիգրան Խաչիկյանի,**

քննելով դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով համալրման նպատակով 2023 թվականի հունիսի 28-ին անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված թիվ 12632 ծածկագրով բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Բողոքաբերի կողմից բողոքարկվել են «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 57-րդ հարցը, ինչպես նաև 1-ին և 4-րդ խնդիրները:

Հանձնաժողովը Բողոքաբերի կողմից վկայակոչված «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 57-րդ հարցի և 1-ին և 4-րդ խնդիրներ մասով արձանագրում է, որ Բողոքաբերի կողմից կողմից ընտրված պատասխանի ճշմարտացիության, խնդիրներում նշված պատասխանների, իրավանորմերի, ինչպես նաև դրանց վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումների վերաբերյալ բողոքում նշված հիմնավորումները չեն բխում ՀՀ

քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով ամրագրված վերաբերելի իրավակարգավորումների տրամաբանությունից, ինչպես նաև նշված հարցերի ուղենիշային պատասխաններից, հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Գնահատման հանձնաժողովի կողմից հիշյալ հարցի և խնդիրների վերաբերյալ Բողոքաբերին նշանակված միավորները ենթակա չէ բարձրացման:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, բողոքը քննելով ներկայացված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, արձանագրում է, որ այն հիմնավոր չէ և ենթակա է մերժման, ուստի «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 57-րդ հարցից ստացած 0 միավորը, ինչպես նաև 1-ին և 4-րդ խնդիրների վերաբերյալ Բողոքաբերին նշանակված միավորները անհրաժեշտ է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Բարձրագույն դատական խորհրդի 02.02.2023 թվականի թիվ ԲԴԽ-15-Ո-55 որոշման 4-րդ հավելվածի 4-րդ բաժնի 9-րդ կետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Թիվ 12632 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել, «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 57-րդ հարցից ստացած 0 միավորը, ինչպես նաև 1-ին և 4-րդ խնդիրների վերաբերյալ Բողոքաբերին նշանակված միավորները թողնել անփոփոխ. արձանագրել, որ թեստային բոլոր առաջադրանքների ընդհանուր հանրագումարային միավորը 42 միավոր է, իսկ խնդիրներինը՝ 34 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ